ՆԱԽԱԳԻԾ 58

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

2013 թվականի նոյեմբերի -ի N -Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԵՎ ԿԱՊԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ ԳՈՒՄԱՐ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ, ԻՆՉՊԵՍ ՆԱԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2012 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի N 1616-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ կետը և «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ո ւ մ է.**

1. «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնետիրական ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով կանոնադրական կապիտալն ավելացնելու (ավելացման առաջին փուլ) նպատակով Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեից հատկացնել 1,845,000.0 հազ. դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Ներքին բաժնետոմսերի և այլ մասնաբաժինների ձեռքբերում» հոդվածով):

2. «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի պետական բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի «Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1616-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ՝ համաձայն NN 1, 2, 3 և 4 հավելվածների:

3. Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը՝ 2014 թվականի ընթացքում Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն «Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» փակ բաժնե-

տիրական ընկերության բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման (ավելացման երկրորդ փուլ) նպատակով պետական բյուջեից միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հ. Բեգլարյան

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի աղյուսակում, N 4 հավելվածի N 1 աղյուսակում և ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման N 1 հավելվածի N 1 աղյուսակում կատարվող փոփոխությունները

հազար դրամներով

Պետական բյուջեի դեֆիցիտի ֆինանսավորման աղբյուրներն ու դրանց տարրերի անվանումները	Ցուցանիշների փոփոխությունը (աղբյուրների նվազեցումը և ելքերի ավելացումը նշված է փակագծերում)
	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	**(1,845,000.0)**
այդ թվում՝	
Ա. Ներքին աղբյուրներ-ընդամենը	**(1,845,000.0)**
այդ թվում՝	
2.Ֆինանսական զուտ ակտիվներ	**(1,845,000.0)**
այդ թվում՝	
2.2 Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում	(1,845,000.0)
ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն	(1,845,000.0)
«Հայաստանի հեռուստատեսային և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ	(1,845,000.0)

ՀԱՎԵԼՎԱԾ N 4

Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20 -ի N 1616-Ն որոշման N 6 հավելվածում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

	Եկամտատեսակը	Ցուցանիշների փոփոխություն (գումարների ավելացումները նշված են դրական նշանով)
		Տարի
	Այլ եկամուտներ, ընդամենը	**1,345,000.0**
	այդ թվում՝	
5	Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից եկամուտներ	52,956.6
5.2.	Ռադիոհաճախականության օգտագործման վճար	52,956.6
6	Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտներ	1,292,043.4
6.3.	Այլ եկամուտներ	1,292,043.4

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 2-րդ հոդվածի աղյուսակի ցուցանիշներում կատարվող փոփոխությունները

(հազար դրամներով)

	Ցուցանիշների փոփոխություն (գումարների ավելացումները բերված են դրական նշանով, իսկ նվազեցումները՝ փակագծերում)
1. Եկամուտների գծով	1,845,000.0
2. Ծախսերի գծով	-
3. Դեֆիցիտ	(1,845,000.0)

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

«Հայաստանի Հանրապետության 2013 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի աղյուսակում և ՀՀ կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման N 2 հավելվածում կատարվող փոփոխությունները

(հազար դրամ)

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	Ցուցանիշների փոփոխություն (ավելացումները բերված են դրական նշանով)
	Տարի
ԸՆԴԱՄԵՆԸ	**1,845,000.0**
այդ թվում՝	
Հարկային եկամուտներ և պետական տուրքեր	500,000.0
Այլ եկամուտներ	1,345,000.0

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության տրանսպորտի և կապի նախարարությանը գումար հատկացնելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականի պետական բյուջեում և Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1616-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի

Անհրաժեշտությունը. Վերը նշված նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) ընդունումը պայմանավորված է «Հայաստանի հեռուստատեսության և ռադիոհաղորդիչ ցանց» ՓԲԸ-ի (այսուհետ՝ Ընկերություն) կանոնադրական կապիտալի ավելացման մասին ՀՀ կառավարության կողմից ընդունվելիք որոշմանը համապատասխան բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու միջոցով Ընկերության կանոնադրական կապիտալը ավելացնելու համար ֆինանսական ռեսուրսներ առանձնացնելու անհրաժեշտությամբ:

Ընթացիկ իրավիճակը և խնդիրները. Ներկայումս Ընկերության կանոնադրական կապիտալն իր չափի պատճառով խնդիրներ է ստեղծում Ընկերության բնականոն գործունեության ապահովման տեսանկյունից: Ուստի, անհրաժեշտ է լուծել Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման երկփուլ գործընթացի ֆինանսական ապահովման խնդիրը:

Բյուջեների վրա ազդեցությունը. Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման առաջին փուլի իրագործման նպատակով Նախագծով առաջարկվում է ՀՀ 2013 թվականի պետական բյուջեից ՀՀ տրանսպորտի և կապի նախարարությանը հատկացնել 1,845.0 մլն դրամ: Հատկացումը նախատեսվում է իրականացնել ՀՀ 2013 թվականի պետական բյուջեով նախատեսված եկամուտների գումարի նկատմամբ ստացվելիք լրացուցիչ մուտքերի հաշվին: Այդ իսկ պատճառով, Նախագծով առաջարկվում է նաև վերը նշված գումարի չափով ճշգրտել ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի եկամուտների, դեֆիցիտի և վերջինիս ֆինանսավորման աղբյուրների տարեկան ծրագրային ցուցանիշները: Արդյունքում, ՀՀ 2013 թվականի պետական բյուջեի տարեկան ծրագրային ցուցանիշը Նախագծի համաձայն կավելանա, իսկ դեֆիցիտի և վերջինիս ֆինանսավորման աղբյուրների (այդ թվում ներքին աղբյուրների) տարեկան ծրագրային ցուցանիշներից յուրաքանչյուրը կնվազի 1,845.0 մլն դրամով: Նախագծի ընդունումը համայնքների բյուջեներում եկամուտների ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

Տվյալ բնագավառում իրականացվող քաղաքականությունը. Նախագծի ընդունումը բյուջետային բնագավառում քաղաքականության փոփոխմանը չի հանգեցնում:

Նախագծի նպատակը և բնույթը. Նախագծի ընդունմամբ հնարավորություն կընձեռվի Ընկերությունը դարձնել առավել կայուն քաղաքացիական իրավունքի սուբյեկտ՝ բյուջետային աջակցությամբ ամրապնդելով նրա ֆինանսական բազան:

Ակնկալվող արդյունքը. Ընկերությունը ավելի ճկուն կմասնակցի պայմանագրային հարաբերություններին:

Նախագծի ընդունումը այլ իրավական ակտերում փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջացնի:

Նախագիծը համապատասխանում է միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորություններին: